

### ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման  
և եվրահնտեզրման բաժնի ավագ դատախազ,  
իրավագիտության թեկնածու, դոցենտ

## ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԵՎԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը (ՀՀ Սահմանադրության 27.11.2005թ. խմբագրությամբ): Այս նորմն հանդիսանում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնի կարգավիճակի սահմանադրական հիմքը: Տեսության մեջ և իրավական պրակտիկայում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «օրենքի միատեսակ կիրառությունը» որպես իրավական կատեգորիա արժանացավ հակասական գնահատականների: Տեսաբանների մի մասը այն դիտում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի խնդիր՝ կամ գործառնական նպատակ,՝ մյուսները՝ որպես նպատակաուղղված գործունեություն կամ գործառույթ: ՀՀ կառավարության 10.03.2011թ. հաստատած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի 9.11-րդ կետում օրենքի միատեսակ կիրառությունը դիտվում է որպես խնդիր, իսկ 9.9-րդ կետում՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական լիազորություն: Նորմատիվ իրավական ակտերում օրենքի միատեսակ կիրառությունը նույնպես տարբեր կերպ է որակվում: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում օրենքի միատեսակ կիրառությունը հստակ դիտվում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության նպատակ: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում օգտագործվում է «օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր» ձևակերպումը (ՀՀ վճռաբեկ դատարանի 02.06.2009թ. որոշման 20-րդ կետ), սակայն ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2007թ. ՄԴՈ-691 որոշմամբ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելը դիտվում է որպես գործառույթ: Կարծում ենք՝ օրենքի միատեսակ կիրառությունը ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության սահմանադրական նպատակն է (կոչումը), ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի ձևակերպումից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը **կոչված է** ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը (ընդգծումն՝ Ղ.Ա.):

ՀՀ սահմանադրական դատարանը 28.07.2009թ. ՄԴՈ-818 որոշման 6-րդ կետում օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթից բխեցրել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավունքի զարգացման իրավասությունը, որի շրջանակներում, նա պետք է մեկնաբանի իրավական հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի համապատասխան սուբյեկտներին կանխատեսել

իրենց վարքագծի իրավական հետևանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնահարցերը բազմազան են, որոնք դուրս են սույն հետազոտության առարկայի շրջանակներից, ուստի աշխատանքում կքննարկենք համատեսական նշանակության հետևյալ հարցերը՝

- 1) ՀՀ վճռաբեկ դատարանի դերակատարությունը հանրային կյանքում,
- 2) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների բնույթը,
- 3) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հարաբերական կայունությունը և փոփոխման ընթացակարգը,
- 4) ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության ոլորտների սահմանագատումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դերակատարությունը հանրային կյանքում: ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակը էական նշանակություն ունեցավ հանրային կյանքում նրա դերակատարության փոփոխության և նորովի ընկալման հարցում: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում, հանդիսանալով գոտ երրորդ ատյանի դատարան, խիստ սահմանափակ ազդեցություն ուներ իրավական քաղաքականության վրա, նրա որոշումները ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների, այնպես էլ դատական համակարգում չունեին բավարար հեղինակություն: ՀՀ վճռաբեկ դատարանը հազվադեպ էր ունակ իրեն վերապահված քաղաքական իշխանությանը ներհատուկ ուժով վերահսկել գործադիր մարմինների ակտերի օրինականությունը, և դրանով իսկ հակադրվելու այդ մարմինների քաղաքականությանը: Ավելին՝ իշխանության այլ մարմինների հետ հակասություններից խուսափելու նպատակով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, դատավարական որոշումներին տալով հակաիրավական, ոչ համակարգային մեկնաբանություն, նպատակ էր հետապնդում պարզապես խուսափել ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու պրակտիկայից: Օրինակ՝ դատարանները ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի (նախկին խմբագրությամբ) ոչ իրավական մեկնաբանության արդյունքում ձևավորել էին կայուն պրակտիկա, ըստ որի ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության որոշումները վիճարկելու հայցերն անհրաժեշտ է մերժել այն պատճառաբանությամբ, որ այդ ակտերը կարող են վիճարկվել միայն ՀՀ սահմանադրական դատարանում: ՀՀ սահմա-

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նադրական դատարանը 16.11.2006թ. ՄԴՈ-665 որոշման 5-րդ կետում արդարացիորեն նշել է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վճռաբեկ դատարանները ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը մեկնաբանել են՝ առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր.-ի 14-րդ և 15-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Եթե ընդհանուր իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության դիսպոզիցիան գուգորդել ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքացու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, թե ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

ՀՀ վճռաբեկ դատարանը պատշաճ դերակատարություն չուներ մաս դատական համակարգի ներսում, որի ապացույցը դատական շրջապատույտի ձևավորված պրակտիկան էր: ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանում էր առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի ակտերը, արտահայտում կոնկրետ իրավական դիրքորոշում, սակայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, անտեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, կայացնում էին նույնաբովանդակ որոշումներ, որի արդյունքում ձևավորվում էր դատական շրջապատույտ:

Հանրային կյանքում ՀՀ վճռաբեկ դատարանի գործառնական դերակատարությունը փոխվեց օրենքների միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական դրույթի և դրանից բխող դատավարական և դատարանակազմական մի շարք նորմերի ամրագրմամբ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքում (2007թ. խմբագրությամբ) սահմանվեց.

1. ՀՀ վճռաբեկ դատարան կարող են բողոքարկվել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, իսկ վերաքննիչ ու վարչական դատարանի որոշումները օրինական ուժի մեջ էին մտնում հրապարակման պահից,

2. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքեր, իսկ նոր երևան եկած հանգամանքները հանվեցին վճռաբեկ բողոքի և այն վարույթ ընդունելու հիմքերի ցանկից,

3. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում էր ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատը, իսկ վճռաբեկ բողոքը քննում էր ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով,

4. ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը համանման գործերով պարտադիր են առաջին և վերաքննիչ

նիչ դատարանների համար:

Դատաիրավական քաղաքականության հեղինակների կարծիքով սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ վճռաբեկ դատարանը դադարում է զուտ երրորդ ատյանի դատարան լինելուց և հանդես է գալիս որպես իրավունքի դատարան, ուստի օրենսդրական վերը նշված նորամուծություններն իրենց համակցությամբ կազմում էին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես իրավունքի դատարան կարգելու գաղափարախոսության իրավական հիմքը:

Ինչպես ցանկացած նոր ինստիտուտ, ՀՀ վճռաբեկ դատարանի նոր կարգավիճակը և գործունեությունը հանրային կյանքում առաջացրեց հսկասական տրամադրություններ: Հասարակական կյանքում դժգոհությունների հիմնական առիթը վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հայեցողական հիմքերի նախատեսումն էր<sup>4</sup>: Բանն այն է, որ նոր մոտեցման համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը պարտավոր չէ քննության առնելու օրենքի ձևական պահանջներին համապատասխանող ցանկացած վճռաբեկ բողոք, այլ օրենքով սահմանված հայեցողական հիմքերի շրջանակներում որոշում է բողոքը ենթակա է քննության, թե ոչ: Նշված դժգոհությունների իրավական արտահայտման ձևը՝ ՀՀ քաղաքացիների, ՀՀ գլխավոր դատախազի, փաստաբանների կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հայեցողական հիմքերի և բողոքները վերադարձնելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը չպատճառաբանելու սահմանադրականության վիճարկումն էր: ՀՀ սահմանադրական դատարանը 09.04.2007թ. ՄԴՈ-690 և 11.04.2007թ. ՄԴՈ-691 գործերով գտել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերը չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը, այն պատճառաբանությամբ, որ դրանք նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձևական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությամբ, և սահմանել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված<sup>5</sup>:

Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես իրավունքի դատարանի գաղափարախոսության միասնական իրավական հիմքերը երկար կյանք չունեցան և սկսվեց դատական վերակառուցումների նոր ալիք<sup>6</sup>: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի 07.10.2008թ. թիվ 20L որոշմամբ ՀՀ դատական դեպարտամենտին հանձնարարվել էր մեկամսյա ժամկետում պատրաստել դատաիրավական բարեփոխումների տրամաբանական ավարտին հասցնելու հայեցակարգից բխող օրենսդրական նախագծերի փաթեթը: Նոր դատական համակարգի վերափոխման ընթացքում կատարվեցին մաս օրենսդրական մի շարք փոփոխություններ, որոնցով կարծեք փորձ է արվում վերադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին՝ մինչև ՀՀ Սահմանադրության փոփոխությունը եղած կարգավիճակին: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի, քաղ. դատ. օր-ի և դատական օրենսգրքում 26.12.2008թ. փոփոխություններով և լրացումներով նոր կամ նոր երևան եկած հանգամանքները դիտարկվեցին որպես վճռաբեկ բողոք բերելու և բողոքը վարույթ ընդունելու

հիմք (ՀՀ քր. դատ. օր-ի 406-րդ հոդվածի 1-ին մաս, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, ՀՀ քաղ. դատ. օր-ի 226 –րդ հոդված), ՀՀ վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող ակտերը ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում (ՀՀ քր. դատ. օր-ի 402-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ քաղ. դատ. օր-ի 221<sup>1</sup> հոդվածի, ՀՀ վարչ. դատ. օր-ի 117.16 հոդված):

Չնայած ՀՀ վճռաբեկ դատարանի դատավարական կարգավիճակի առանձին տարրերի փոփոխության հիմնավորվածության՝ օրենքի միատեսակ կիրառման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած դատական քաղաքականությունը հանգեցրել է հանրային կյանքի տարբեր ոլորտների էական փոփոխության: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատական քաղաքականության առաջնահերթություններից է անձի անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման դատավարական կառուցակարգերը ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի պահանջներին համահունչ դարձնելը: ՀՀ վճռաբեկ դատարանի նպատակաուղղված քաղաքականության արդյունքում էապես փոխվել են անձին ազատությունից զրկելու, մասնավորապես կալանքի՝ որպես խափանման միջոցի հայեցակարգային հիմքերը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մի քայլ առաջ ընկնելով ՀՀ օրենսդիր մարմնից, կալանքի կիրառման ընթացակարգերը համապատասխանեցրել է միջազգային և սահմանադրական չափանիշներին: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 10.04.2009թ. կայացրել է իր բնույթով աննախադեպ որոշում՝ սահմանելով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական կարգավորումը, մասնավորապես՝ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումը, հակասում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կալանքի օրինականության սկզբունքին: Մեկ այլ օրինակ. ՀՀ վճռաբեկ դատարանի հետևողական քաղաքականության արդյունքում վերացվել է այն պրակտիկան, երբ հանձնված անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել այլ հոդվածով, քան հանձնվել է ՀՀ-ին: Կարելի է շարունակել ՀՀ վճռաբեկ դատարանի հանրային նշանակության որոշումների ցանկը, որոնցում արտացոլված դատական քաղաքականությունը փոխել է իրավական կյանքում առկա երևույթների դասավորվածությունը, սակայն այդ հարցերի համալիր քննարկումը դուրս է սույն աշխատության նպատակների շրջանակներից:

**ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի բնույթը:**

Օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրի կենսագործման օրենսդրական երաշխիքներից առանձնանում է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթ, որն ըստ էության սահմանում է անգոտաքստնական իրավունքին բնորոշ *stare decisis* կանոնը<sup>2</sup>: Նշված դրույթով պետությունը պաշտոնապես ճանաչեց նույնամանա փաստական հանգամանքներով գործերով այլ դատարանների համար ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նորմատիվությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, 25.07.2008թ. որոշ-

մամբ մեկնաբանելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «նույնամանա փաստական հանգամանքներով գործ» հասկացությունը, նշել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս, պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինելու կամ չլինելու հարցը<sup>3</sup>:

ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին: Կարծում ենք՝ այս դրույթը, թեև ձևակերպված է որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք, սակայն հանդիսանում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նորմատիվության հատկանիշներից մեկը: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 26.13.2006թ.-ին այս հարցի վերաբերյալ արտահայտել է հետաքրքրություն ներկայացնող դիքքորոշում: Այդ գործով վճռաբեկ բողոք բերած անձինք իրենց բողոքը հիմնավորում էին այն փաստարկով, որ վերաքննիչ դատարանի վճիռը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի 12.06.2005թ. թիվ ԲՎԲ - 37205 որոշմանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոքն այս հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ. «Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի այս փաստարկը չի գնահատում որպես բողոքի հիմք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտին: Հետևաբար, բողոք բերած անձի այս պատճառաբանությունը պետք է գնահատել որպես բողոքի ընդունելիությունը հիմնավորող փաստարկ: Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Հետևաբար վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերանայվող դատական ակտի հակասելը վճռաբեկ դատարանի նախկինում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդունած որոշմանը ինքնին ստորադաս դատարանի վերանայվող դատական ակտը բեկանելու հիմք չէ, այլ ընդամենը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկն է»:

Սույն գործով արտահայտված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից բխում է, որ եթե այլ դատարանի ակտը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշմանը, ապա դա ինքնին վերանայվող դատական ակտը բեկանելու հիմք չէ, այլ ընդամենը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից է: Այս մտեցումն ընդունելի չէ: Եթե հետևենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 26.10.2006թ. դիրքորոշմանը, ապա ստացվում է, որ դատավարական օրենսդրությամբ թվարկվում են ընդամենը բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, որոնք չեն կարող հանդիսանալ դատական ակտը բեկանելու հիմք: Կարծում ենք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի այս որոշումն ինքնին չի բացառում, որ այլ դատարանի ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշմանը հակասելը, գործում առկա այլ հանգամանքների համակցությամբ, կարող է հանդիսանալ դատական ակտը բեկանելու հիմք: Ավելին, այլ դատարանի ակտի հակասությունը ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմանը պետք է դիտվի մաս դատական ակտը բեկանելու ինքնուրույն հիմք, քանի որ եթե այն չի համարվում բեկանման հիմք, ապա ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է իր որոշմանը հակասող ստորադաս դատական ակտը թողնել ուժի մեջ<sup>9</sup>, ինչն ամենևին չի համապատասխանում մրս կարգավիճակին: ՀՀ վճռաբեկ դատարանի այս որոշման մեջ առավել մտահոգիչն այն է, որ առանձին պարբերությամբ հիշատակվում է ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը, որի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: Նախ նշենք, որ քննարկվող որոշման պատճառաբանությունից չի երևում սահմանադրական այս նորմի և բողոքի այդ հիմքը մերժելու հիմնավորման միջև առկա կապը: Դատարանը բավարարվել է հիշատակելով ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի բովանդակությունը, սակայն պարզ չէ, թե այս նորմի վկայակոչմամբ դատարանը ինչ<sup>10</sup> խնդիր է լուծում: Դատարանը ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը չի մեկնաբանել կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո: Ուստի չենք կարծում, որ սահմանադրական քննարկվող նորմը վկայակոչելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ցանկացել է մատնանշել, որ դատարանի անկախությունը և միայն Սահմանադրությանը և օրենքներին ենթարկվելը, բացառում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հրապարակմանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: ՀՀ դատական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը են-

թակա են պաշտոնական հրապարակման Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներն օժտված են գիտատեսական բնույթով: Գործող օրենսդրությունը բարձր դատարանի դատավորների պաշտոնում նշանակվող թեկնածուների համար նախատեսում է ոչ պարտադիր գիտական ցեղ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավագիտության բնագավառում գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող և վերջին հինգ տարիների ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտապես իրավունք դասավանդող կամ գիտական հաստատությունում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են ընդգրկվել վերաքննիչ ատյանի դատարանների դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում: Փաստորեն, ՀՀ դատական օրենսգիրքը հնարավորություն է նախատեսում իրավագիտության դոկտորներին՝ անմիջապես նշանակվելու ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր: Նման օրենսդրական դրույթի գործնական կիրառությունը կնպաստի դատական ակտերի գիտատեսական որակների հարստացմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 17 դատավորներից միայն երկուսն են իրավագիտության թեկնածու<sup>10</sup>: Կարծում ենք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության գիտատեսական հիմքերի ամրապնդման, այդ քաղաքականության կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է դատավորի թափուր պաշտոններում նշանակումներ անելիս կարևորել նաև թեկնածուների գիտական աստիճանների կամ գիտահետազոտական բնույթի աշխատանքային փորձի առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հարաբերական կայունությունը և փոփոխման ընթացակարգը: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կայունությունը սերտորեն առնչվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականության և իրավական որոշակիության հետ: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները չեն կարող համարվել կայուն, եթե նույնանման իրավիճակներում դատարանը կայացնում է միմյանց հակասող դատական ակտեր՝ ցուցաբերելով ոչնչով չարդարացված, չպատճառաբանված տարբերակված մոտեցում: Նման դեպքերում ՀՀ վճռաբեկ դատարանը դատական քաղաքականություն ձևավորող, դատական համակարգում իրավական միասնականությունն ապահովող մարմնի փոխարեն հանդես է գալիս իրավական անորոշության աղբյուր:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին» հաշվետվության 50-րդ կետում հստակ նշվում է, որ գերագույն կամ սահմանադրական դատարանների հակասական որոշումների առկայությունը կարող է հակասել իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար անհրաժեշտ է, որ դատարանները, հատկապես բարձր դատարանները, դիրքորոշումների հակասություններից խուսափելու և նրանց դատական պրակտիկայի ներդաշնակությունը ապահովելու համար հնարավորություն ունենան օգտագործել տարբեր կառուցակարգեր<sup>11</sup>:

Եվրոպական դատարանը, Բեյանն ընդդեմ Ռուսիայի գործով, ուսումնասիրել է Ռուսիայի գերագույն դատարանի որոշումների հակասականության հարցը, և նշել, որ իր պրակտիկայի հետևողականությունն ապահովող մեխանիզմի բացակայության պարագայում ներպետական բարձրագույն դատարանը միևնույն օրը կայացրել է Հ-309-2002 օրենքի կիրառելիության ոլորտի վերաբերյալ տրամադժողուն հակառակ որոշումներ: Եվրոպական դատարանը նշված որոշման 37-39-րդ կետերում նշել է. «Իհարկե, դատական պրակտիկայում առկա տարբերությունները ինքնին ուղեկցում են իրավական ցանկացած համակարգ, որը հիմնված է վերջինիս տարածքում առկա նյութական իրավունքի հարցերով լիազորված տարբեր իրավասությունների ամբողջության վրա: Մակայն, գերագույն դատարանի դերը հենց կայանում է նրանում, որպեսզի վերացնի այդ հակասությունները: Մակայն, պետք է նշել, որ այս դեպքում վճռաբեկ բարձր դատարանը ինքն է հանդիսանում այն խորը և կայուն տարբերությունների աղբյուրը, որոնք մատնանշվել են բողոքաբերի կողմից: Երկրի բարձրագույն դատական ատյանի կողմից ձևավորված այս պրակտիկան ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, որը ենթադրվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բոլոր հոդվածներում և հանդիսանում «իրավունքի գերակայության» հիմնարար բաղադրիչներից մեկը: Փոխանակ ենթակա մեկնաբանությունն ամրապնդելու, վճռաբեկ բարձր դատարանը ինքն է դարձել իրավական անորոշության աղբյուր, այդպիսով խաթարելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ»: Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դատական անորոշությունը դիմումատուին գրկել է Հ-309-2002 օրենքով սահմանված երաշխիքներից օգտվելու որևէ հնարավորությունից, մինչդեռ միևնույն իրավիճակում գտնվող այլ մարդկանց այդ իրավունքներն ընձեռվել են: Հետևաբար, թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում<sup>12</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում այն միասնական չէ. ՀՀ վճռաբեկ դատարանը միևնույն հարցի վերաբերյալ կայացրել է հակասական որոշումներ, օրենքներին տվել տարբեր մեկնաբանություններ: ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության առանձին ոլորտներում իրավական անորոշության, կամայականության, երկակի չափանիշների կիրառման բազմաթիվ օրինակներ են նշվում ոչ միայն գիտական աշխատանքներում և փաստաբանների իրականացրած հետազոտություններում, այլև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում (տես աշխատանքի 4-րդ գլխի 1-ին պարագրաֆը):

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականությունը և կայունությունը չի խաթարվում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը փոխում է իր մախկին դիրքորոշումը՝ դատական ակտում հստակ պատճառաբանելով նման փոփոխության անհրաժեշտությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն մեկ դեպքում է ՀՀ վճռաբեկ դատարանը պաշտոնապես փոփոխել իր մախկին դիրքորոշումը և ակտով

պատճառաբանել այն: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը Մյասնիկ Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. որոշման 16-րդ կետում նշել է. «Եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած՝ եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության»:

Հետագայում ՀՀ սահմանադրական դատարանը 07.12.2009թ. ՄԴՈ-844 որոշմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, պայմանավորված դատախազի «անգործությամբ», որի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը Մ.Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009 թ. որոշման 16-րդ կետում դիրքորոշում է հայտնել, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՀՀ վճռաբեկ դատարանը 12.02.2010թ. որոշման 13-րդ կետում հաստատել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշման ընդունումից հետո ծագել է հակասություն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշման և ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության կապակցությամբ կայացված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի Մ. Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. որոշման միջև, իսկ նշված որոշման 14-րդ կետում նշել է, որ Մ. Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. **որոշմամբ ձևավորված դիրքորոշումը պետք է վերանայել (ընդգծումն՝ Ղ.Ա.)** և համապա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տասխանեցնել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քր. դատ. օր-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հետ:

Այսպիսով՝ նշված դեպքն այն եզակիներից է, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը կոնկրետ նորմի վերաբերյալ հայտնել է իրավական դիրքորոշում, սակայն հետագայում պաշտոնապես վերանայել, փոփոխել է այն: ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների պաշտոնապես փոփոխելու պրակտիկայի եզակիությունը, կարծում ենք, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ, ի տարբերություն ՀՀ սահմանադրական և Եվրոպական դատարանների, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխության իրավական ընթացակարգ: Այս առումով գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ ծագում են ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների իրավական դիրքորոշումների փոփոխության կամ ՀՀ պալատների իրավական դիրքորոշումների հակասությունը լուծելու հարցեր (օրինակ՝ միջնորդային իրավական հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը և քաղաքացիական ու վարչական պալատը կայացրել են հակասական որոշումներ), ապա նման գործերը պետք է քննի ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով<sup>13</sup>:

*ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի քաղաքականության սահմանազատումը:* Դատական քաղաքականության ձևավորման ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության ոլորտն ավելի նեղ է, քան ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ոլորտը: Բանն այն է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության իրավական հիմքը առավելապես օրենքներն են, որոնց հասկացությունները առավել կոնկրետ են, տրվում են իրավական հասկացությունների բնորոշումները, այլ կերպ ասած, ՀՀ Սահմանադրության համեմատ, օրենքները հասարակական հարաբերությունները կարգավորում են առավել մանրամասն՝ դրանով իսկ սահմանափակելով ՀՀ վճռաբեկ դատարանի հայեցողության սահմանները, դատական քաղաքականության տիրույթը: Մինչդեռ սահմանադրական նորմերի ընդհանրական բնույթը ՀՀ սահմանադրական դատարանին այդ նորմերը մեկնաբանելու առավել լայն հնարավորություն են տալիս<sup>14</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի քաղաքականության սահմանազատումը կարևոր նշանակություն ունի այդ երկու մարմինների դիրքորոշումների հակասություններից խուսափելու, իրավական համակարգի միասնականությունը և որոշակիությունը ապահովելու համար: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում նշվում է, որ բացի սահմանադրական արդարադատության հարցերի, ՀՀ բարձրագույն դատական ատյանը վճռաբեկ դատարանն է: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը:

Տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում հաճախ է դրվում հետևյալ հարցադրումը. եթե ընդհանուր իրավասության դատարանները, կոնկրետ գործ քննելիս կարծում են, որ կիրառվող իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ապա արդյո՞ք պարտավոր են այդ ակտի սահմանադրականության որոշման հարցով դիմել ՀՀ սահմանադրական դատարան: Մինչև հայ իրականությանն անդրադառնալը, համառոտ ներկայացնենք արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկայում սույն հարցի վերաբերյալ առկա մոտեցումները: Այս վեճը բավականին սուր բնույթ ստացավ ՌԴ գերագույն դատարանի և ՌԴ սահմանադրական դատարանի միջև:

Քննարկվող հարցի վերաբերյալ ՌԴ գերագույն դատարանի պլենումը իր դիրքորոշումն հայտնել է 1995թ. դեկտեմբերի 31-ի որոշմամբ, որի 2-րդ կետում տրվում են այն դեպքերը, երբ դատարանները Սահմանադրությունը կիրառում են անմիջականորեն՝ 1. երբ Սահմանադրությամբ սանրագրված նորմը լրացուցիչ կարգավորման կարիք չունի և օրենքի ընդունման պահանջը բացակայում է, 2. երբ դատարանը կգտնի, որ Սահմանադրությունից առաջ կամ դրանից հետո ընդունված օրենքը հակասում է Սահմանադրությանը և այլն: Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ կիրառվող կամ կիրառված օրենքի՝ Սահմանադրության համապատասխանության հարցի անորոշության դեպքում դատարանը դիմում է Սահմանադրական դատարան: Տեսության մեջ արդարացիորեն նշում է, որ ՌԴ գերագույն դատարանի պլենումի որոշման 3-րդ կետում օգտագործվող «անորոշություն» տերմինը մնում է չարգաբանված: Եթե «անորոշություն» ասելով նկատի ունեն օրենքի սահմանադրականության վերաբերյալ դատարանի կասկածը, ապա ինչպես պետք է հասկանալ այն, որ դատարանը Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման մեջ պետք է հիմնավորի սահմանադրությանը հակասելու փաստը: Եթե դատարանը դիմումում պատճառաբանում է իր դիրքորոշումը, ապա նա արդեն գտել է բարդ իրավական վիճակի ելքը, և չինչ չի խանգարում նրան գործն ըստ էության լուծել սահմանադրական նորմի հիման վրա՝ անտեսելով Սահմանադրությանը հակասող նորմը<sup>15</sup>:

Մյուս կողմից, ՌԴ սահմանադրական դատարանը 1998թ. հունիսի 16-ի թիվ 19-Պ որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարանները, գտնելով, որ օրենքը հակասում է Սահմանադրությանը, իրավունք չունեն այն կիրառել կոնկրետ գործով և պարտավոր են օրենքի սահմանադրականությունը որոշելու հարցով դիմել սահմանադրական դատարան<sup>16</sup>:

Տեսության մեջ առաջարկվում է հարցի լուծման հետևյալ տարբերակը. «Դատարանը, եզրակացնելով, որ կիրառման ենթակա օրենքը հակասում է Սահմանադրությանը, իրավունք ունի գործը լուծել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի կամ Սահմանադրության հիման վրա, առանց սահմանադրական դատարանի դիմելու, եթե կհանդգնի, որ Սահմանադրության նորմերը, նրա հետագուտած փաստական հանգամանքներն անհրաժեշտ և բավարար են օրինական և հիմնավոր որոշում կա-

յացնելու համար: Եթե դատարանը կգա այն հանգ-  
մունքին, որ օրինական և հիմնավոր որոշում կա-  
յացնելն անհնար է առանց՝ իր կարծիքով սահմա-  
նադրությանը հակասող օրենքի կիրառմանը, նա  
պարտավոր է կասեցնել գործի վարույթը և դիմել  
սահմանադրական դատարան: Բոլոր դեպքերում,  
եթե դատարանը կեզրակացնի, որ հակասահմա-  
նադրական օրենքը կապված է քրեական, վարչա-  
կան և կարգապահական պատասխանատվության  
միջոցների կիրառման հետ, նա պարտավոր է կա-  
սեցնել վարույթը և դիմել սահմանադրական դատա-  
րան: Ակնհայտ է, որ նշված պատասխանատվու-  
թյան միջոցների կիրառումը հնարավոր է միայն  
նման պատասխանատվության միջոց նախատեսող  
ակտի հիման վրա»<sup>17</sup>:

Ն. Վիտրուկը նշում է. «Պետք է համաձայ-  
նել, որ եթե դատարանը, հաշվի առնելով գործի  
փաստական հանգամանքները, կհամոզվի, որ Սահ-  
մանադրության նորմը բավարար է օրինական և  
հիմնավոր որոշում կայացնելու համար, նա կարող է  
անմիջականորեն կիրառել Սահմանադրության  
նորմը՝ անտեսելով այն օրենքը, որը դատարանի  
հանդգմամբ հակասահմանադրական է: Սակայն,  
այս իրավիճակում դատարանը չի ազատվում այդ  
օրենքի սահմանադրականությունը որոշելու հարցով  
Սահմանադրական դատարան դիմելու պարտակա-  
նությունից, հակառակ դեպքում նա կխախտի օրի-  
նականության սկզբունքը»<sup>18</sup>:

Այժմ ՀՀ դատարանները իրավասու են ան-  
միջականորեն դիմել ՀՀ սահմանադրական դատա-  
րան: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդ-  
վածի համաձայն՝ Սահմանադրությամբ և սահմա-  
նադրական դատարանի մասին օրենքով սահման-  
ված կարգով սահմանադրական դատարան կարող  
են դիմել դատարանները իրենց վարույթում գտնվող  
կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի  
դրույթների սահմանադրականության հարցերով:  
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրեն-  
քի 71-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ սույն  
հոդվածում նշված գործերով ՀՀ սահմանադրական  
դատարան դիմում են դատարանները, ինչպես նաև  
զլխավոր դատախազը, եթե գտնում են, որ Սահմա-  
նադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմա-  
նադրական դատարանի ենթակայությանը վերա-  
պահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմա-  
տիվ բնույթ, դրույթ կամ դրույթները, որոնք ենթակա  
են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ  
գործով, հակասում են Սահմանադրությանը:

Ինչպես նշվեց, առանձին տեսաբաններ  
կարծում են, որ եթե ընդհանուր իրավասության դա-  
տարանը, կոնկրետ գործի քննության ընթացքում  
գտնում է, որ այդ օրենքը հակասում է Սահմանադ-  
րությանը, ապա կարող է վեճը լուծել անմիջականորեն  
սահմանադրական նորմի հիման վրա, եթե վս-  
տահ է, որ օրենքի նորմը ուղղակիորեն հակասում է  
Սահմանադրությանը և դա բխում է անձի սահմադ-  
րական իրավունքների իրականացման անհրաժեշ-  
տությունից<sup>19</sup>: Այս դեպքում, պետք է նկատի ունենալ,  
որ ընդհանուր իրավասության դատարանը դատա-  
կան ակտի եզրափակիչ մասում պաշտոնապես  
օրենքը չի ճանաչում հակասահմանադրական, սա-  
կայն որոշման պատճառաբանական մասում այս-  
պես, թե այնպես ներկայացնում է օրենքի հակա-

սահմանադրականությունը: Կարծում ենք՝ այս իրա-  
վիճակը կարելի է դիտել որպես «սովերային սահ-  
մանադրական արդարադատություն», որի կիրառ-  
ման հնարավորությունը վտանգավոր է: Բանն այն  
է, որ հնարավոր է մի իրավիճակ, որ կոնկրետ գործի  
քննության ընթացքում կիրառվող նորմատիվ իրա-  
վական ակտը մի դատավորի կողմից գնահատվի  
որպես սահմանադրական, մեկ այլ դատավորի կող-  
մից՝ սահմանադրությանը հակասող: Նման դեպ-  
քում առաջանում է նորմատիվ իրավական ակտերի  
առնչությամբ ՀՀ Սահմանադրության միասնական  
կիրառության ապահովման խնդիր: Արդյոք ՀՀ վճ-  
ռաբեկ դատարանն իրավասու է ապահովել ՀՀ  
Սահմանադրության միասնական կիրառության  
հարցը: Կարծում ենք, եթե ՀՀ Սահմանադրության  
միասնական կիրառությունն առնչվում է նորմատիվ-  
իրավական ակտերի սահմանադրականությանը,  
ապա դա ՀՀ Սահմանադրական դատարանի բա-  
ցառիկ իրավասությունն է: Եթե ՀՀ վճռաբեկ դատա-  
րանն ապահովում է օրենքների միատեսակ կիրա-  
ռությունը, ապա ՀՀ Սահմանադրական դատարանն  
ապահովում է իրավական ակտերի սահմանադրա-  
կանության ոլորտում Սահմանադրության միասնա-  
կան կիրառությունը:

Գ. Մուրադյանը այս կապակցությամբ ար-  
դարացիորեն նշում է. «Դատական օրենսգրքով վճ-  
ռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները  
պարտադիր են բոլոր ստորադաս դատարանների  
համար, ուստի, եթե ՀՀ վճռաբեկ դատարանն իր  
որոշումների պատճառաբանական մասում եզրա-  
հանգումներ է արել որևէ գործով կիրառման ենթա-  
կա օրենքի հակասահմանադրականության մասին  
և այդ հիմքով չի կիրառել այն, ղեկավարվելով միայն  
Սահմանադրության պահանջներով, ապա այդ  
օրենքը փաստացի ճանաչվել է հակասահմանադ-  
րական և ոչ մի դատարան այն իրավունք չունի կի-  
րառելու, եթե չհիմնավորի, որ վճռաբեկ դատարանի  
այդ որոշումը չի կարող վերաբերել իր կողմից լուծ-  
ման ենթակա գործին»<sup>20</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը  
25.02.2011թ. ՄԴՈ-943 որոշման 8-րդ կետում հստակ  
սահմանել է.

«Սահմանադրական դատարանի որոշումների և  
դատական այլ ակտերի բնույթի, բովանդակության և  
դրանց իրավաբանական ուժի համեմատական  
վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական  
արդարադատություն իրականացնելը և այդ գործա-  
ռույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում  
կայացնելը ՀՀ սահմանադրական դատարանի բա-  
ցառիկ իրավասությունն է (ՀՀ Սահմանադրության  
92-րդ հոդվածի երկրորդ մաս և 93-րդ հոդված): ՀՀ-  
ում այլ դատարան կամ պետական այլ մարմին  
իրավասու չէ իրականացնել ՀՀ Սահմանադրության  
100-րդ հոդվածով սահմանադրական դատարանին  
վերապահված որևէ լիազորություն»:

*Այսպիսով՝ կարելի է եզրակացնել.*

1. ՀՀ վճռաբեկ դատարանը, մինչև սահմանադ-  
րական բարեփոխումները, իշխանության համա-  
կարգում չունեի բավարար հեղինակություն, ավելին՝  
քաղաքական իշխանության այլ մարմինների հետ  
հակասություններից խուսափելու նպատակով, ի  
վնաս մարդու իրավունքների դատական պաշտպա-  
նության, ինքնասահմանափակում էր սեփական իշ-

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խանությունը՝ հրաժարվելով դատական վերահսկողության ենթարկել ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության որոշումների օրինականությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառություն ապահովող մարմնի կարգավիճակի սահմանադրական ամրագրմամբ հանրային կյանքում էականորեն փոխվեց նրա դերակատարությունը, հանրային կյանքի վրա ներազդելու իրավական գործիքների (դատական ակտերի) բնույթը: ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած դատական քաղաքականությունը մի շարք ոլորտներում առաջ է բերել արմատական փոփոխություններ, ազդել է գործադիր իշխանության մարմինների գործունեության բովանդակության և առաջնահերթությունների վրա:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կայունությունը խաթարվում է, երբ նույնանման իրավիճակներում կայացվում է միմյանց հակասող դատական ակտեր՝ ցուցաբերելով ոչնչով չարդարացված, չպատճառաբանված, տարբերակված մոտեցում: Նման դեպքերում ՀՀ վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնից վերաճում է իրավական անորոշության աղբյուրի:

3. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականությունը և կայունությունը չի խախտվում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը փոխում է

իր նախկին դիրքորոշումը՝ դատական ակտում հստակ պատճառաբանելով նման փոփոխության անհրաժեշտությունը: Այն դեպքերում, երբ ծագում են ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների իրավական դիրքորոշումների փոփոխության կամ նրանց միջև առկա հակասությունը լուծելու անհրաժեշտություն, ապա նման գործերը պետք է քննի ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով:

4. Իրավական ակտերի սահմանադրականության որոշման ոլորտում ՀՀ Սահմանադրության միատեսակ կիրառության ապահովման պարտականությունը դրված է ՀՀ սահմանադրական դատարանի վրա: Եթե այլ դատարանները և ՀՀ վճռաբեկ դատարանը գործի կամ բողոքի քննության ընթացքում կարծում են, որ կիրառվող իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ապա պարտավոր են կասեցնել գործի վարույթը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

<sup>1</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հիմնախնդիրները քրեական դատավարությունում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում, Սեմինարի նյութերի ժողովածու: (ք. Երևան, 2007թ. մարտի 6), Եր.: Ռ-ՀՀ հրատ., 2007. էջ 20, Գասպարյան Վ. ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը: Նույն տեղը, էջ 46, Ենգոյան Հ. Դատական արդյունավետ պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Նույն տեղը, էջ 97:

<sup>2</sup> Տե՛ս Մուրադյան Գ. ՀՀ վճռաբեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական նախադեպը»: Նույն տեղը, էջ 71:

<sup>3</sup> Տե՛ս Դիրքանյան Ս., Մելիքյան Ռ. Վճռաբեկությունը քրեական դատավարությունում: «Պետություն և իրավունք», 2007, թիվ 35, էջ 54:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ջհանգիրյանի ելույթը՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 25.07.07թ. նիստում.

<http://www.genproc.am/main/am/51/2397/>, Ա.Թամազյանի ելույթը՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 25.07.07 նիստում. <http://www.genproc.am/main/am/51/2401/>, Ղազարյան Ա. ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկան քրեական գործերով (ընդգրկում է 01/01/07-01/07/09 ժամանակահատվածը): «Փաստաբանների պալատ», 2010:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանը հետազայում անդրադարձել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու առանձին իրավակարգավորումների սահմանադրականությանը: Այդ մասին մանրամասն տես Ղամբարյան Ա. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ինստիտուտը դատական համակարգի վերափոխման գործընթացում: «Օրինականություն», 2009, թիվ 56, էջեր 14-18:

<sup>6</sup> Տե՛ս Ղազինյան Գ., Վաղարշյան Ա. Դատական շինարարությունը Հայաստանի երեք Հանրապետություններում և դատական համակարգի վերակառուցման արդի հայեցակարգի մեթոդաբանությունը: «Իրավագիտության հարցեր», 2008, թիվ 3-4, էջ 18:

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010, էջ 911:

<sup>8</sup> Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ս. Այվազյանի վերաբերյալ գործով 23.05.2008թ. որոշման 26-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս Այս տարբերակը հնարավոր ենք համարում, եթե վճռաբեկ դատարանը փոխում է իր նախկին դիրքորոշումը, պատճառաբանում այն և ընդունում է վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումը:

<sup>10</sup> Տե՛ս Տվյալները վերցվել են ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված դատավորների կենսագրություններից. [http://www.court.am/?l=lo&mode=common\\_court&id=29](http://www.court.am/?l=lo&mode=common_court&id=29) (12.05.2011 դրությամբ):

<sup>11</sup> Տե՛ս Доклад о верховенства права. Европейская комиссия за демократию через право (Венецианская комиссия). Принято на 86 пленарном заседании Венецианской Комиссии. (Венеция, 25-26 марта 2011 г.). С. 17.

<sup>12</sup> Տե՛ս Бюллетень Европейского Суда по правам человека. Российское издание, 2008. № 6. С.14-15.

<sup>13</sup> Տե՛ս Նմանատիպ կարգավորում նախատեսված է ՌԴ սահմանադրական դատարանի, Եվրոպական դատարանի պարագայում:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների կարգավիճակների փոխհարաբերակցության առանձին

հարցերի մասին տես Меликян Р. Н., Татоян А. А. Некоторые вопросы согласования конституционно-правовых статусов Конституционного и Кассационного судов РА. «Актуальные проблемы правосудия в контексте современного конституционализма». Сборник материалов Международной научно-практической конференции, посвященной 15-летию принятия Конституции РА. 24-25 сентября 2010г., Ереван- Дилижан. Ереван, изд. «Тигран Меш», 2010. С. 39-49.

<sup>15</sup> Տե՛ս Լазарев Լ. Разграничение юрисдикции и взаимодействие судов в защите прав и свобод личности. Российская юстиция. 1996. № 4. С.15; Терехова Л.А. Проблемы обжалования нормативных актов. Вестник Омского университета, 1997. № 2. С. 90-93.

<sup>16</sup> Մի շարք գիտնականներ չեն համաձայնվել ՌԴ սահմանադրական դատարանի այս դիրքորոշման հետ: Տե՛ս Железнова Н.Д. Практика судебного контроля за содержанием нормативных актов. Судебная власть в России. М.: 2002. С. 84-102; Лебедев В. М. Становление и развитие судебной власти в Российской Федерации. М.: 2000, Проблемы защиты публичных и частных интересов в административных судах. М.: 2001; Жилин Г.А. Признание нормативных актов недействительными. Российская юстиция, 1998. № 7. С.41.

<sup>17</sup> Տե՛ս Конституционный судебный процесс: Уч. для вузов. Отв. ред. Саликов М.С. М.: 2003. С. 298.

<sup>18</sup> Տե՛ս Витрук Н. В. Конституционное правосудие. Судебное конституционное право и процесс. Учеб. пос. - 2е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2005. С. 433-434.

<sup>19</sup> Տե՛ս Գաապարյան Վ. ՀՀ վճռարեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը: Նույն տեղը, էջ 58:

<sup>20</sup> Տե՛ս Մուրադյան Գ. ՀՀ վճռարեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական ցախադեղը»: Նույն տեղը, էջ 78:

## РЕЗЮМЕ

### *Кассационный Суд РА как орган, формирующий судебную политику*

В данной статье автор рассматривает функции Кассационного Суда в сфере судебной политики.

А. Гамбарян отмечает, что до конституционных реформ Кассационный Суд РА не обладал достаточной репутацией в системе власти. Более того, в целях избежания противоречий с другими органами политической власти, в ущерб судебной защите прав человека ограничивал собственную власть, отказываясь подвергать судебному контролю законность решений Президента РА и Правительства РА. Установлением конституционного статуса Кассационного Суда РА в качестве органа, обеспечивающего единообразное применение закона, существенным образом изменилась его роль в общественной жизни и характер правовых инструментов воздействия на общественную жизнь. Сформированная Кассационным Судом РА судебная политика привела к коренным изменениям в ряде сфер, повлияла на содержание и приоритеты деятельности органов исполнительной власти.

В статье отмечается, что стабильность решений Кассационного Суда искажается, когда в идентичной обстановке выносятся противоречивые друг другу судебные акты, проявляя неоправданный, немотивированный различный подход. В подобных случаях Кассационный Суд РА из органа, обеспечивающего единообразное применение закона, перерастает в источник правовой неопределенности. Единство и стабильность политики Кассационного Суда не нарушается, когда Кассационный Суд меняет свою прежнюю позицию, четко мотивируя в судебном акте необходимость такого изменения. В тех случаях, когда возникает необходимость изменения правовых позиций соответствующих палат Кассационного Суда РА или разрешения имеющихся между ними противоречий, то подобные дела должен рассматривать Кассационный Суд РА в полном составе.

По мнению автора, в сфере определения конституционности правовых актов обязанность обеспечения единообразного применения Конституции РА возложена на Конституционный Суд РА. Если Кассационный Суд или другие суды в процессе рассмотрения дела либо жалобы считают, что применяемый правовой акт противоречит Конституции РА, то обязаны приостановить производство по делу и обратиться в Конституционный Суд РА.

## SUMMARY

### *Court of Review of the RF as the body of forming the judicial policy*

In this article the author develops the subjects of the functions of the Court of Review in the sphere of the judicial policy.

A.Ghambaryan notices that before the constitutional reforms the Court of Review of the RF didn't possess sufficient reputation in power system. Moreover, with the view of avoidance of contradictions with other bodies of the political power, the detriment of judicial protection of human rights limited own power, refusing the subject of judicial control legality of decisions of the President of the RF and the Government of the RF. The establishment of the constitutional status of the Court of Review of the RF as the body providing uniform application of the law, has essentially changed its role in public life and character of legal tools of influence on public life. The judicial policy generated by the Court of Review of the RF has led to basic changes in a number of spheres, affecting the maintenance and priorities of activity of enforcement authorities.

In the article is mentioned that the stability of decisions of the Court of Review is deformed when judicial certificates are taken out inconsistent to each other, showing the unjustified, unmotivated various approach. In such cases the Court of Review of the RF from the body providing uniform application of the law, develops into a source of legal uncertainty. The unity and stability of a policy of the Court of Review isn't broken, when the Court of Review changes the former position, accurately motivating in the judicial certificate necessity of such change. In cases, when there is a necessity of a change of legal positions the Court of Review of the RF should consider similar affairs.

According to the author, in the sphere of definition of constitutionality of legal certificates the duty of maintenance of uniform application of Constitution of the RF is assigned to the constitutional Court of the RF.